Արձանագրություն թիվ Հ-3

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2007թ. փետրվարի 9-ի հարցման կարգով նիստի

Քննարկեցին.

««Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2007թ. փետրվարի 6-ի նիստում.

I. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ» պետական հիմնարկի միջև կնքվելիք «Իրականացնող կազմակերպության Պայմանագրի» նախագծի հաստատման հարցի քննարկման արդյունքում խորհուրդն ընդունել է հետևյալ որոշումը.

-Հաստատել «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ» պետական հիմնարկի միջև կնքվելիք «Իրականացնող կազմակերպության Պայմանագրի» նախագծի տեքստը, պայմանով, որ Կողմերի կողմից ստորագրվելուց առաջ ՀՄԿ-ի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Պայմանագրի կողմերի միջև ձեռք բերվի փոխադարձ համաձայնություն Պայմանագրի 8.6.գ /անգլերեն տեքստում՝ 8.6(c)/ կետի շուրջ:

II. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և ACDI/VOCA-ի /ԱՄՆ/ (ARCADIS Euroconsult-ի /Հոլանդիա/ և VISTAA-ի /Հայաստան/ հետ համատեղ) միջև կնքվելիք «Խորհրդատվական ծառայությունների մատուցման Պայմանագրի» նախագծի հաստատման հարցի քննարկման արդյունքում խորհուրդն ընդունել է հետևյալ որոշումը.

-Հաստատել պայմանագրի նախագիծը, պայմանով, որ այն Կողմերի կողմից ստորագրվելուց առաջ.

1/ ՀՄԿ-ի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Պայմանագրի կողմերի միջև ձեռք բերվի փոխադարձ համաձայնություն դրա Զ Հավելվածի /անգլերեն տեքստում՝ F Հավելվածի/ Ա՝ «ՀՄԿ-ի կարգավիճակը, վերապահված իրավունքները, շահառու երրորդ անձ», կետի շուրջ, և

2/ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ն ուսումնասիրի ու ներկայացնի եզրակացություն՝ Պայմանագրում կողմերի պատասխանատվության մասին հնարավոր դրույթ/ներ/ ներառելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով, որ Խորհրդի կողմից դրված պայմանները բավարարվել են, ի հաստատումն որի՝ սույն արձանագրությանը կցվում են ՀՀ վարչապետ, Կառավարման խորհրդի նախագահ Ա. Մարգարյանին ուղղված «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի 07.02.2007թ. թիվ ՀՄՀ-66 և 08.02.2007թ. թիվ ՀՄՀ-69 գրությունների, ինչպես նաև՝ ՀՄԿ Հայաստանյան Գրասենյակի տնօրեն Ալեքս Ռասինին ուղղված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 08.02.2007թ. էլեկտրոնային գրության պատճենները, **հ ա ս տ ա տ ե լ.**

1. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ» պետական հիմնարկի միջև կնքվելիք «Իրականացնող կազմակերպության Պայմանագրի» լրամշակված տեքստը:

2. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և ACDI/VOCA-ի /ԱՄՆ/ (ARCADIS Euroconsult-ի /Հոլանդիա/ և VISTAA-ի /Հայաստան/ հետ համատեղ) միջև կնքվելիք «Խորհրդատվական ծառայությունների մատուցման Պայմանագրի» լրամշակված տեքստը:

Ա. Մարգարյան ..... Հայաստանի Հանրապետության վարչապետ, Խորհրդի նախագահ

Վ. Ներսիսյանց.....ՀՀ Նախագահի գլխավոր տնտեսական խորհրդական

Հ. Աբրահամյան.....ՀՀ տարածքային կառավարման նախարար

Վ. Խաչատրյան.....ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար

Դ.Լոքյան ..... ՀՀ գյուղատնտեսության նախարար

Ա. Մանուկյան..... ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար

Տ. Ղազարյան..... Շենիկ ՁՕԸ վարչական խորհրդի նախագահ

Ն. Վարդանյան..... «Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ գործադիր տնօրեն

Վ. Սողոմոնյան..... «Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ նախագահ

Վ. Համբարձումյան.....«Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա» ԻԱՄ նախագահ

Կ. Նազարյան .....ՀՀ միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամի նախագահ

Ռ.Ղազարյան..... «ՀՄՀ-Հայաստան»ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Խորհրդի քարտուղար